8928 15.58

23 SEP 2019 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«23» սեպտեմբեր 2019թ. No 2599 - Ա

ԵԳԻՊՏՈՍԻ «ՄԱՐԿՐԻԼ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ԻՆԴԱՍՏՐԻԵՍ», ՈՒԵՍՏ ԷՔՍՏԵՆՍԻՈՆ-20005 ԲԼՈԿ, ԷԼ-ՕԲՈՒՐ-ՍԻՏԻ 11828, ԿԱՀԻՐԵ, ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԲԱՅՈՋԵՍՏ (ՊՐՈԳԵՍՏՐՈՆ) ՊԵՍԱՐԻԱՆԵՐ ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ԿԱՄ ՈՒՂԻՂԱՂԻՔԱՅԻՆ 200 ՄԳ/30/6Х5/), «ԲԱՅՈՋԵՍՏ (ՊՐՈԳԵՍՏՐՈՆ) ՊԵՍԱՐԻԱՆԵՐ ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ԿԱՄ ՈՒՂԻՂԱՂԻՔԱՅԻՆ 400 ՄԳ/30/6Х5/), «ՖՈՐՏՐՈՒՍՏԵՊ (ԴԱՊՕՔՍԵՏՐԻՆ (ԴԱՊՕՔՍԵՏՐԻՆ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ)) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱԹԱՆԹԱՊԱՏ 60 ՄԳ(6/1Х6) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշումը, համաձայն «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 13.09.2019 թվականի N 0103133519, բացասական եզրակացությունները՝ «Բայոջեստ (պրոգեստրոն) պեսարիաներ հեշտոցային կամ ուղիղաղիքային 200 մգ/30/6x5/), «Բայոջեստ (պրոգեստրոն) պեսարիաներ հեշտոցային կամ ուղիղաղիքային 400 մգ/30/6x5/), «Ֆորտրուստեպ (դապօքսետրին (դապօքսետրին հիդրոքլորիդ)) դեղահատեր թաղաթանթապատ 60մգ(6/1x6) բլիստերում դեղերի որակի, արդյունավետության և անվտանգության փորձաքննության արդյունքները, հիմք՝ փորձաքննության եզրակացություն N 18779 առ 13.09.2019թ., N 18780 առ 13.09.2019թ. և N 18794 առ 13.09.2019թ. ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել եգիպտոսի «Մարկրիլ Ֆարմասյուտիկալս Ինդաստրիես», Ուեստ էքստենսիոն-20005 Բլոկ, էլ-Օբուր-Սիտի 11828, Կահիրե, դեղագործական ընկերության արտադրության «Բայոջեստ (Պրոգեստրոն) պեսարիաներ հեշտոցային կամ ուղիղաղիքային 200 մգ/30/6x5/), «Բայոջեստ (Պրոգեստրոն) պեսարիաներ հեշտոցային կամ ուղիղաղիքային 400 մգ/30/6x5/), «Ֆորտրուստեպ (Դապօքսետրին (դապօքսետրին

Մաք. 23.09.19 15.30

հիդրոքլորիդ)) դեղահատեր թաղաթանթապատ 60մգ(6/1x6) բլիստերում դեղերի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ առաքել հայտատուին:

3. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝ 3-օրյա ժամկետում ապահովել սույն հրամանի տրամադրումը հայտատուին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի հայտատուին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

23.09.2019

X

VERIFIED OCSP 23.09.2019 11:22:29 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157